

ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ “ԲԱԶՄԱՎԷՊ”Ի

«Սիոն» յանուն նորին Ամենապատուութեան Սրբազան Պատրիարք Հօր և բովանդակ Միաբանութեան, հաճոյքն ունի շնորհաւորելու Հարիւրամեայ Յորդեխանը հայ մամուլի ամենէն հին ու ումենէն աւելի յարատե մէջ միութեան, «Բազմավէպ»ին :

Հարիւր տարի կը բաժնէ մեզ իր ծագման օրերէն, ինչպէս նաև մտայնութիւններէ, կարիքներէ, արժեչափերէ, որոնք ոչ միայն անցեալին կը պատկանին այլ և ունին կենդանի որոշ անդրադարձումներ, մեր օրերուն ալ տակաւին ի զօրու :

Հանդէսը իր յառաջորդութիւններով և բովանդակութեամբ միշտ մնաց հաւատարիմ մեր «գարթօնք»ի զաղափարաբանութեան, որ ինքզինքը ամենէն առաջ «Բազմավէպ»ի մէջ փորձեց ամրապնդել : Հայ լեզուին, հայ պատմութեան, հայ զրականութեան պաշտամունքին և արժարժումին նուիրուած մանաւանդ, մեր անցեալը գտնելու և վերբերելու իր փոյթով, «Բազմավէպ» ոչ միայն երևոյթ մը այլ իրագործում մըն է կանխող դարու կէսերուն :

Ոչ միայն մեր, այլ միջազգային լրագրութեան պատմութեան մէջ, հազուագիւտ են Հանդէսներ, որոնք «Բազմավէպ»ի տարիքը յաջողած ըլլան ունենալ : Ասիկա մենք կը պարտինք զերագանցօրէն Մխիթարեան հայրերու անձնուրացութեան և կրողին :

Մեր պատմութիւնը դիտելու իր կերպը եթէ մնաց նոյն՝ սակայն իր գուրգուրանքն ու որոնումները և այդ ոգիէն ու ճիգերէն ձեռք բերուած արդիւնքը կը մնայ սիրելի ու պատկառելի :

«Բազմավէպ»ը մէկէ աւելի նպատակներու զործադրութիւնը հետապնդեց, անիկա լոկ հայագիտական ձեռնարկ մը չեղաւ, այլ ունեցաւ մանաւանդ զանգուածներու օգտակար դիտելիքներ մատուցանելու առաջադրութիւնը : Պատմական, հնագիտական, մանկավարժական, բանասիրութեան և ճաճանչաւոր քերթողութեան յայտադրութիւններէն սկսեալ, մինչև աշխարհագրական, թուաբանական և խոհանարարային տարագներու մանրուքը տեղ ունեցաւ հոն, զայն ընծայելով ընդհանուր դիտելիքներու հանդիսարան մը :

Սակայն Հանդէսին բուն նպատակը եղաւ հայրենագիտութիւն և բանասիրութիւն, անոր անդրանիկ խմբագրէն՝ Ալիշանէն սկսեալ, մինչև Բագրատունին, Հացունին, Ղազիկեանն ու Ժանօգեանը : Հոն՝ բազմամեայ այդ Հանդէսին մէջ իրենց միտքն ու շնորհը բերած են մեր մեծ բանասէրները, գիտունները, լեզուաբանները, զրականագէտները, բանաստեղծներն ու արուեստի սպասարկուները : «Բազմավէպ»ը եղած է մշակութային կարևոր ազդակ մը Մխիթարեան հայրերու ազգասիրական ոգիով սոգորուած :

Հանդէսը իր լայն ստաւարը բերաւ նոյնպէս կրօնական ապրումներուն և զրական ամէն սեռերու արտայայտութեան, նորադարձ մեր ընթերցասիրութիւնը արծարծել ջանալով առօրեայ նորութիւններով :

«Սիոն» կը կրկնէ իր շնորհաւորականը, մաղթելով «Բազմավէպ»ի նոր հարիւրամեակներ, կատարելու այն բարերար գերը, որ իրեն եղաւ և կը մնայ, մեր ազգային և մշակութային կեանքին մէջ :

ԽՄԲ.